Արձանագրություն N 1
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների (կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» «Նոյեմբեր» 2018թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ծ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ	Մ.Մխիթարյան, Հ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ծ.Սարգսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Գնման ընթացակարգի հրավերի տեքստը հաստատելու մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատելու մասին

(Ծ.Սարգսյան)

Հաստատել «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ծ.Սարգսյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2018թ. դեկտեմբերի 7-ին ժամը 14:00-ին, առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ծ.Սարգսյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

Արձանագրություն N 2
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների (կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«07» «Դեկտեմբեր» 2018թ. ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ծ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ	Մ.Մխիթարյան, Հ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ծ.Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ 27.11.18թ. հրապարակվել է հրավեր eauction.armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 05.12.18թ., հակադարձ աճուրդ (հայտերի բացումը) տեղի է ունեցել 2018 թվականի դեկտեմբերի 7-ին ժամը 10:00-ին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Լոկատոր» ՓԲԸ	sevak.minasyan@locator.am	00095651
2	«Դավթյան» ՍՊԸ	info@toolbox.am	07618736

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ծ.Սարգսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ծ.Սարգսյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ծ.Սարգսյան)

Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում է ստորև.

ՀՀ դրամ

Կազմակերպության անվանում	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
	Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
«Լոկատոր» ՓԲԸ	11,958,333.34	2,391,666.66	14,350,000	11,958,333.34	2,391,666.66	14,350,000
«Դավթյան» ՍՊԸ	36,000,000	7,2000,000	43,200,000	36,000,000	7,2000,000	43,200,000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ծ.Սարգսյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Ծ.Սարգսյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց «Լոկատոր» ՍՊԸ-ին առաջարկել ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա (վերջնաժամկետ 12.12.18թ. ժամը 18:00) ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետը՝

որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լոկատոր» ՓԲԸ-ի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ծ.Սարգսյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ծ.Սարգսյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան

Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար անհրաժեշտ ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի համակարգչային ծրագրային փաթեթների (կենտրոնական դիսպետչերական ղեկավարման համակարգի) սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» «Դեկտեմբեր» 2018թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ծ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ	Մ.Մխիթարյան, Հ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Մնացականյան

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմանվորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել «Լոկատոր» ՓԲԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել է սահմանված ժամկետին:

Որոշվեց «Լոկատոր» ՓԲԸ-ի որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ծ.Սարգսյան)

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 12.12.18թ.

Որոշվեց «Լոկատոր» ՓԲԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ծ.Սարգսյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ 14,350,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշվեց «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2019/3» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ է սահմանվում 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ծ.Սարգսյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Հ.Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան